«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ	15
ԱՌԱՐԿԱ	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ՆԱԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱԽՈՒՐՅԱՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 6
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ 6
ԳԼՈՒԽ 2 8
ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 8
ԳԼՈՒԽ 3 11
ԱԶԳԱՀԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ 11
3.1: ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 11
3.2: ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 12
3.3: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 13
ԳԼՈՒԽ 4 15
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ձգտումներն ու արարքները, վարքն ու հույզերը, դրսևորումներն ու մտահաղացումները կախված են մեր արժեքներից՝ թե ինչի՞ն ենք մենք դավանում և ինչո՞վ ենք առաջնորդվում։

Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Արժեքներն են իմաստավորում կյանքը։ Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը և աշակերտները պետք է սովորեն դրանց համապատասխանել։

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում։ Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների։ Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն։ Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության

ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ժամանակակից դպրոցը պետք է կրթի սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

Մեզ՝ հայերիս համար այսօր էլ՛ ավելի է կարևորվում ազգային արժեքների ձևավորումը, քանի որ ներկայիս իրավիճակում միայն ազգային արժեքներով դաստիարակված սերունդն է ի վիճակի պահպանելու և սերունդներին փոխանցելու մեր ազգային արժեքները, իսկ դրա հիմքը համապատասխան կրթությունն է:

Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողների մեջ ձևավորել ազգային արժեհամակարգ աշխարհագրության դասաժամերին:Այստեղ առավել մեծ է հատկապես «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի դերն ու նշանակությունը:Այստեղ մեծ է առարկան դասավանդող ուսուցիչների դերը: Ազգային արժեքային համակարգ ձևավորելու գործում կարևորում եմ հայրենաճանաչողությունը:Այն պետք է ձևավորվի ոչ միայն դասաժամերին,այլև գործնական և դաշտային աշխատանքների ժամանակ: Այն աշակերտը, ով ճանաչում է իր երկիրը , չի կարող այն չսիրել:

Ներկայիս արագ ձևափոխվող աշխարհում կարևորում եմ աշխարհագրություն առարկայի դերն ու նշանակությունը, որպեսզի կարողանանք պահպանել մեր ազգային դիմագիծն ու մշակութային առանձնահատկությունը Ուսուցչի գերխնդիրը պետք է լինի վեր հանել այն արժեքավորը, որ իր պատմության ընթացքում պահպանել է հայ ժողովուրդը, որպեսզի կարողանա փոխանցել հաջորդ սերունդներին։

ԳԼՈՒԽ 1
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Արժեհամակարգը բավական լայն հասկացություն է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի և հայագիտական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է լեզվի, գրականության, հայոց պատմության, ինչպես նաև Հայաստանի աշխարհագրության դերը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ներքո: Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը՝ սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի վրա հիմնվելով՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, երբ անձի արժեքային համակարգը ձևավորվում է հասարակական կարծիքի և սոցիալական միջավայրի միջոցով:

Մյուս կարևոր գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների:

Սովորողի արժեքային համակարգի վրա ազդող մյուս կարևոր գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները:

Աշակերտի արժեքային համակարգը ձևավորվում է ոչ միայն ընտանիքում, այլև դպրոցում: Ուսուցման դաստիարակչական գործունեությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին:
- Կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

- Ունենա ազգային ինքնագիտակցություն։
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը։
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում։
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը։
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը։
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն։

Ելնելով վերոնշյալից, կարող ենք փաստել, որ դպրոցի և ուսուցչի դերը աշակերտների արժեհամակարգի ձևավորման վրա բավական մեծ է ու անփոխարինելի։

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Հնարավոր չէ իրականացնել դաստիարակությունը՝ օժտված չլինելով համամարդկային արժեքներին ապավինելու և ազգային անհատականությունը պահպանելու կարողությամբ:

Ուստի, աշակերտի մտավոր զարգացման և համոզմունքների ձևավորման հետ կապված, անդրադառնանք նաև այն հատկանիշներին, որոնցով օժտված պետք է լինի ուսուցիչը:

Հայտնի ճշմարտություն է այն, որ սոսկ ուսուցիչ կոչվելը և համապատասխան կրթություն ունենալը բավարար չեն այդ կոչմանն արժանանալու համար: Յուրաքանչյուր ուսուցիչ անհատականություն է: Ուսուցիչը չի կարող լինել փաստերի և դեպքերի անտարբեր դիտող, նա չի կարող սահմանափակվել միայն իր առարկայի ոլորտով: Նույնիսկ ամենահմուտ մանկավարժին ոչ միշտ է հաջողվում հեղինակություն լինել աշակերտների համար, վայելել նրանց հարգանքը: Եթե աշակերտը հավատ չունի ուսուցչի նկատմամբ, նրա վրա ազդելը և համոզելը անհնար է:

Դասարան-ուսուցիչ փոխհարաբերություններում ուսուցչին է պատկանում առաջատար դերը: Որտեղ առկա են առողջ, հարգանքի ու պահանջկոտության վրա հիմնված հարաբերություններ, ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ են: [5, էջ49]

Ցավոք սրտի, ուսուցիչը այսօր գրեթե միայնակ է մնացել։ Ընտանիքը, շրջապատը, հեռուստատեսությունը, համացանցը և շատ այլ գործոններ ու երևույթներ բացասաբար են անդրադառնում երեխայի դաստիարակության և հատկապես նրա մեջ ազգային արժեհամակարգի ձևավորման վրա։

Հոգեբանները փաստում են՝ ոչինչ այնքան վտանգավոր չէ անձի ձևավորման գործում, որքան նրա հոգևոր աշխարհը ոչ օգտակար տեղեկատվությամբ նենգափոխելը։ Այս երևույթը տեղի է ունենում այսօր և կշարունակվի այնքան ժամանակ, որքան կրթությունը կդիտվի որպես միայն գիտելիքների որոշակի պաշար հաղորդող գործընթաց։

Այստեղ է, որ կարևորվում է ուսուցչի դերն ու նշանակությունը աշակերտի մեջ ազգային արժեհամակարգի ձևավորման գործընթացում։ Որքան մեծ է ուսուցչի հաղորդած գիտելիքների ծավալն ու համակարգվածությունը, այնքան լայն է անձի մտահորիզոնը, այնքան մեծ է նրա անձնական արժեհամակարգում ընդգրկված օբյեկտների շրջանակը։

Որեմն, որակյալ դասին ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, ուսուցչի համապատասխանությունը ժամանակակից նվաճումներին։

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը։

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը։ Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները։

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը։

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ։

Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ։

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։

ԳԼՈՒԽ 3

ԱԶԳԱՀԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1: ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային գաղափարախոսության հարցը վերջին տարիներին անընդհատ քննարկվող և անչափ շատ շահարկվող հարցերից է: Հիմնական մոտեցումներում, որպես գաղափարախոսության ելակետային հիմքեր, առանձնացվում են հետևյալները.

- Ազգային մշակութային արժեքների, ավանդույթների ու սովորույթների պահպանումը,
- Ժողովրդավարական արժեքների յուրացումն ու ինտեգրումը արևմտյան քաղաքակրթական հանրությանը,
- Քրիստոնեությունը և Հայ Առաքելական սուրբ եկեղեցու վարդապետությունը

Ազգային արժեհամակարգը պետք է լինի.

- Ազգային պատմությանը համահունչ,
- Ազգային ոգուն հոգեհարազատ,
- Ազգային խնդիրներին ներդաշնակ:

Ըստ այդմ էլ հայ ժողովրդի համար XXI դարում կարևորվում է մի քանի հիմնահարց.

Ինչպե՞ս չձուլվել այլ մշակույթներին և ինչպե՞ս պահպանել ազգային ինքնատիպությունը, միևնույն ժամանակ նոր շունչ հաղորդելով ազգային արժեքներին: Անհրաժեշտ է գիտակցել, որ սեփական մշակութային նվաճումները կարող են արժեք ներկայացնել այլոց համար և փոխառվել այլոց կողմից:

Ազգային արժեքային համակարգի ձևավորման գործում առաջնային դերը պատկանում է հանրակրթությանը: Հանրակրթական հաստատությունները իրենց գործունեության կազմակերպման ձևերով պետք է լինեն ազգային գաղափարախոսությունը իրականացնող սկզբնական օղակները:

3.2: ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է: Հայրենասիրություն բառը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, որ նշանակում է «հայրենիք սիրող»: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորում է տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի հայրենիքն ունեցած սիրո մեջ:

Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում են՝ հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է: Նշանակում է, հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր ձնից, իր բակից ու այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից:

Ծնողները, դպրոցը, ուսուցիչները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից պետք է դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ

Լինել հայրենասեր նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման,ժողովրդի բարեկեցության,ազգային արժեքների պահպանման ու սերունդներին փոխանցելու համար: Պահպանել ժողովրդի արժանապատվությունը, ոչ մի դեպքում չխաղալ նրա պատվի հետ:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր կարող են խաղալ մեր մեծ հայրենասերների ապրած կյանքն ու գործունեությունը:

Հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանիշերը՝ օրհներգը, զինանշանը և դրոշը:

3.3։ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևակերպելու, սիրո զգացմունքը արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար։

Բավական լուրջ խնդիր են մեր դպրոցական դասագրքերը, որտեղ ընդգրկված շատ նյութեր ենթակա են քննարկման։ Հայրենասիրական դաստիարակությունը, սակայն միայն դասագրքերով չպետք է սահմանափակվի։ Անհրաժեշտ են կազմակերպել մրցույթներ, քննարկումներ, միջոցառումներ, այցելություններ թանգարաններ, էքսկուրսիաների կազմակերպում դեպի հայրենի բնություն և պատմաճարտարապետական կոթողներ։

Այս միջոցառումները է՛լ ավելի կամրապնդի սերը աշակերտների մեջ դեպի հայրենիքը, հայրենի բնաշխարհը, սեփական ժողովրդի պատմությունը, մշակույթը, նրա արժեքային համակարգը։

Ընտանիք, հասարակություն, դպրոց՝ ահա այն միությունը, որը կոչված է դաստիարակելու հայրենասեր և ազգային արժեհամակարգ ունեցող սերունդ։

Հայրենիք ասելով պետք է հասկանանք ոչ միայն ՀՀ տարածքը, այլ նաև այն ամենը, ինչ հայինն է՝ մեր պատմությունը, լեզուն ու գրականությունը, եկեղեցին, մշակույթը, մեր ազգային յուրահատկությունները՝ երգը, պարը, ծեսերը, հայի ավանդական կերպարը իր բնորոշ գծերով, սովորույթներով։

Պետք է կարողանանք պահել «մենք»-ի և «մեր»-ի գաղափարը։

Հայրենիքը այն մեծ ուժն է, որը պետք է միավորի աշխարհասփյուռ հայությանը։

Հայրենասիրության լավագույն միջոցը օրինակն է։

Անձի հայրենասիրության ձևավորման սխեման



ԳԼՈՒԽ 4

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

«Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

Ռաֆֆի

Եթե պատմությունը օգնում է ճանաչել ինքներս մեզ ժամանակի մեջ, ապա աշխարհագրությունը՝ տարածության մեջ:

Աշխարհագրության տեղն ու դերը ժամանակակից աշխարհում անգնահատելի է: Ժամանակակից դպրոցում շատ եմ կարևորում այս առարկայի դասավանդումը: Սովորողների մեջ ազգային արժեհամակարգի ձևավորման գործում կարևորում եմ հատկապես «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի դասավանդումը դպրոցում:

Մեր հայրենիքի՝ Հայաստանի աշխարհագրության խոր իմացությունը յուրաքանչյուր հայի նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի, հայոց պատմության և մշակույթի իմացությունը: Այն հայագիտական առարկաների շարքում իր անփոխարինելի դերն ու նշանակությունն ունի:

« Այս առարկայի իմացությունը կօգնի մեզանից յուրաքանչյուրին ճիշտ գնահատել նաև նրա զարգացման հեռանկարներն ու իրական հնարավորությունները, ճիշտ կողմնորոշվել համաշխարհային ու տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող պահանջները»:[6, էջ4]

«Աշխարհագրություն» առարկայի նպատակն է ամբողջական և խոր գիտելիքներ տալ աշխարհի տարածաշրջանների,պետությունների բնության, բնակչության և տնտեսության մասին: Առավել մանրամասն ծանոթացնել մեր անմիջական հարևաններին

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացի նպատակն է.

- Ճանաչելի դարձնել սեփական երկրի բնության հմայքն ու գեղեցկությունը, սեփական ժողովրդի մշակութային արժեքները և տնտեսական նվաճումները, տարածաշրջանային և տեղական բնապահպանական հիմնախնդիրները, աշխարհաքաղաքական մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները:

- Փոխլրացնել հայագիտական և հայապահպան հանրակրթական առարկաների ցանկը՝ պահպանելով ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող սեփական բնագիտահասարակական մոտեցումները։

« Հայաստանի աշխարհագրություն առարկան ուսումնասիրող աշակերտը պետք է.

- Կարևորի Հայկական լեռնաշխարհը՝ որպես համայն հայության բնօրրան և հայ ժողովրդի հայրենիք։
- Գիտակցի ՀՀ աշխարկագրական դիրքի առանձնահատկություններից բխող առավելությունները և սահմանափակումները՝ ունենալով հավասարակշռված և պատճառաբանված դիրքորոշում։
- Գիտակցի ՀՀ-Ի և ԼՂՀ-ի ներկայիս տարածքի և հատկապես Հայկական լեռնաշխարհի բնության տարրերի ռեսուրսային բնապատմական, հոգևոր-գեղագիտական արժեքը։
- Գիտակցի հայ ժողովրդի՝ որպես աշխարհասփյուռ էթնոսի դերն այլ երկրների և սեփական հայրենիքի բարգավաճման գործում։
- Գիտակցի իր հայրենիքի բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանության և վերականգնման կարևորությունը»։ [9,էջ12]

Ելնելով վերոգրյալից, կարող ենք ասել, որ ազգային արժեհամակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցում մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։ Աշխարհագրության ուսուցման նպատակները բազմազան են, և դասավանդող ուսուցիչը էլ ավելի ուշադրություն պետք է դարձնի առարկայի դասավանդման կարևոր նպատակին՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով։

« Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ։

1. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին։

2. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու

աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել։ Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին։

3. Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում։ Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է։

4. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը։

5. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին։

6. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը։

7. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ։

8. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները»։[8,էջ5]

Այժմ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում դասավանդման ավանդական մեթոդների և եղանակների հետ համատեղ Հայաստանի աշխարհագրության դասավանդման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներ և եղանակներ։«Դրանք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և հնարավորություն են ընձեռում ուսուցման կազմակերպման դաս_դասարանային պայմաններում կիրառելու զանազան հնարքներ՝ դասավանդման գործընթացը առավել հետաքրքիր դարձնելու նպատակով»։[8,էջ5]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին աշխարհագրության և հատկապես Հայաստանի աշխարհագրության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:Միայն ուսուցիչների համատեղ աշխատանքի արդյունքում կարելի է ձևավորել արժեքային համակարգ: Այստեղ առավել կարևորում եմ հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության սերտ կապն ու համագործակցությունը:Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

«Եթե պատմությունը օգնում է ճանաչելու ինքներս մեզ ժամանակի մեջ, ապա աշխարհագրությունը՝ տարածության մեջ»:[7, էջ 7]

Շատ կարևոր է համարվում հատկապես տարածքային տարբերությունների և դրանց պատճառների ուսումնասիրումը:Դրա միջոցով ամեն մի ժողովուրդ կարողանում է խորապես ճանաչել ինքն իրեն, իր բնական միջավայրը, զարգացման հնարավորությունները և ծառայեցնելու դրանք սեփական և համամարդկային բարեկեցությունը:

«Ուսուցիչը պարտավոր է աշխարհագրության դասաժամերին ճանաչելի դարձնել սեփական երկրի(հայրենիքի)բնության հմայքն ու գեղեցկությունը, սեփական ժողովրդի մշակութային արժեքներն ու տնտեսական նվաճումները, տարածաշրջանային և տեղական բնապահպանական հիմնախնդիրները, աշխարհաքաղաքական մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ուղիները:

Փոխլրացնել հայագիտական և հայապահպան հանրակրթական առարկաների ցանկը՝ պահպանելով ազգային ինքնագիտակցությանը նպաստող սեփական,բնագիտահասարակական մոտեցումները»: [9, էջ7]

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական առաքելությունը,

որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով։ Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային, հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան_Մանկավարժություն,Երևան 2005,(455էջ)
2. Յու.Բաբանսկի _Աշակերտների դաստիարակությունը
3. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
4. Մուդրիիկ Ա. Վ. -Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986:
5. «Մանկավարժություն»_ ամսագիր_2007թ.,7_8,Երևան(128էջ)
6. Մանասյան, Հովսեփյան Ա._դասագիրք 9_րդ դասարան,Լմաս,2020թ
7. Խ.Նազարյան, Լ.Վալեսյան_Հայաստանի աշխարհագրություն,7_րդ դասարան, 1999, Երևան
8. Ուսումնական ձեռնարկ 9_րդ դասարան,2014(86էջ)
9. Ուսումնական ձեռնարկ 9_րդ դասարան,2009թ(103էջ)